



ԴԱՍ 4.1 Զրահավաք ավագան: Գետի բնութագրիչները

1. Այն սնում է գետերին, կուտակվում է լճերի ու ձահիճների մեջ, մասամբ ներծծվում է՝ առաջացնելով ստորերկրյա ջրեր: Ստորերկրյա ջրերն էլ հիդրավլիկ ձնշման կամ ծանրության ուժի ազդեցությամբ տեղաշարժվում են: Սա էլ անվանում են *ստորերկրյա հոսք*:

Գետի, լճերի, հողի մակենւոյթից ջուրը նորից գոլորշանում է, և բարձրանում ներքնոլորտ: Գոլորշին պաղում է, խտանում, առաջանում են ամպեր, որոնցից ջուրը նորից թափվում է օվկիանոսների և ցամաքի վրա: Ցամաքի վրա տեղացածը նորից մասնակցում է փոքր շրջապտույտի, մի մասը գոլորշանում է, մի մասը՝ ներծծվում, մի մասը նորից հոսում է դեպի գետեր, որոնց միջոցով դարձյալ հոսում է դեպի օվկիանոսներն ու ծովերը և այդպես շարունակ: Այսպիսով, ջրի շրջապտույտը բնության մեջ անընդհատ է, այդ մեխանիզմը գործում է անխափան, դրա համար էլ գետերում ջուրը հոսում է մշտապես: Գետերը հոսում են որոշակի կոնկրետ տարածքներով, սնվում որոշակի աղբյուրներից (ստորերկրյա ջրեր, մթնոլորտային տեղումներ, լճեր): Կարելի է ասել, որ գետը բնական երկրահամակարգ է, որն ունի համակարգին բնորոշ բոլոր բաղադրիչները, որոնք սերտորեն կապված են միմյանց:

2. Կարևորվում է միախառնման տեղում գետի ծախսի ցուցանիշը որպես կանոն մայր գետը ավելի ջրառատ է: Հաշվի են առնում նաև գետահովտի ուղղությունը, տեղանքի երկրաբանական կառուցվածքը, ջրահավաք ավագանի մեծությունը, հայտնաբերման պատմությունը և այլն: Անգարան Ենիսեյից ջրառատ է, բայց կողքից է միանում գլխավոր գետին, Միսիսիպին Միսսուրիից կարճ է, բայց Միսսուրին ավելի ուշ է հայտնաբերվել և ունի փոքր ծախս, Նեղոսի սնման գործում առավել մեծ է Երկնագույն Նեղոսի դերը, բայց այն ավելի բարձրադիր տեղանքով է հոսում և կողքից է միանում Նեղոսին (ինչպես Անգարան՝ Ենիսեյին):

3. Կարգաբանությունը դիտարկենք Հայկական լեռնաշխարհի գետերի՝ Կուրի և Արաքսի օրինակով: ՀՀ տարածքում ջրագրական ցանցն անհավա-

սարաչափ է տեղաբաշխված: Այն առավել զարգացած է Կուրի ավազանում և Սյունիքում՝ ծաղքաբեկորավոր լեռների շրջանում և համեմատաբար խոնավ կլիմայական պայմաններում, իսկ Արաքսի ավազանի մեծ մասում հրաբխային ծակոտկեն ապարներ են, տեղումների քանակն էլ՝ քիչ: ՀՀ հյուսիս – արևելքում և Սյունիքում գետային ցանցի խտությունը 1,5 – 2 կմ / կմ² է, հրաբխային սարավանդներում՝ 0,5 – 0,6 կմ / կմ², Արարատյան դաշտում՝ 0,2 կմ / կմ²: Բացի այդ, ծաղքաբեկորավոր շրջաններում գետերի ջրերում հանքայնացման աստիճանը ավելի բարձր է, քան հրաբխային շրջաններում:

Կուրի երկարությունը 1364 կմ է, նրա աջ վտակը (I կարգ) հայերի մայր գետն է՝ Արաքսը (1072 կմ), Արաքսի աջ վտակը Մակուն է, որն Արաքսին միանում է Նախիջևանի գոգավորությունում: Արաքսի ձախ վտակներից է Հրազդանը (141 կմ. II կարգ), որի աջ վտակներից են Դալարը, Մարմարիկը (III կարգ): Հետևաբար Մարմարիկը Կուրի վտակի (Արաքսի) վտակի (Հրազդան) վտակն է: Քանի որ գետային ցանցի խտությունը կախված է կլիմայից, այդ իսկ պատճառով խոնավ կլիմա ունեցող շրջաններում վտակներն ավելի շատ են: Չնոռանանք, որ մակերևութային հոսքը կախված է նաև ջրահավաք ավազանի ապարների բնույթից՝ հրաբխային, ծակոտկեն ապարաշերտեր են, թե ծաղքաբեկորավոր լեռնային շրջաններ: Դուք գիտեք, որ հրաբխային շրջաններում տիրապետում է ստորերկրյա հոսքը, ծաղքաբեկորավոր շրջաններում՝ մակերևութային:

4. Լուծված աղերի քանակությունը հրաբխային շրջաններում քիչ է և այդ ջրերը խմելու համար լավագույն ջրերն են: Գետային ցանց ասելով հասկանում ենք գլխավոր գետն իր վտակների հետ միասին: Դրանց երկարությունների գումարի և տարածքի հարաբերակցությունն էլ ցույց է տալիս գետային ցանցի խտությունը: Տվյալ գետի գետային ցանցը զբաղեցնում է Երկրի մակերևութի որոշակի տարածք:

5. Հարթավայրային երկրներում, հատկապես չորային կլիմա ունեցող շրջաններում, որտեղ գետային ցանցը շատ նոսր է և մշտաժող գետերը քիչ են, այդ սահմանագիծը անորոշ է, ուստի շատ դեպքերում այն անցկացնում են պայմանականորեն: Որպես ջրբաժան գծեր հաճախ ծառայում են նաև բարձրավայրերը, սարահարթերը: Հարկ է նշել, որ ջրբաժան գծեր անցկացվում են ոչ միայն սահմանակից գետային ավազանների կամ նրանց համակարգերի միջև: Ջրբաժան առանձնացնում են նաև օվկիանոսների, ներքին հոսքի ավազանների, լճային ավազանների միջև և այլն: Առանձնացնում են ջրբաժանի մի քանի տեսակ՝ **գլխավոր** կամ **մայրցամաքային** (առաջին կարգի), որոնք սահմանակից գետային ավազանների միջև են, **եզրային ջրբաժաններ** (երկրորդ կարգի), որոնք գլխավոր գետի սահմանակից վտակների միջև են:

6. Այս բնութագրիչների ուսումնասիրումը ոչ միայն գիտական – ձանաչողական, այլև տնտեսական, գործնական հսկայական նշանակություն ունի: Դրանք ուսումնասիրում է ցամաքի ջրաբանությունը, որը ֆիզիկական աշխարհագրության ենթաձյուղ է: Այն զբաղվում է գետերի, լճերի, ջրամբարների կամ նրանց առանձին մասերի նկարագրությամբ, դրանց տեղադիրքի, ֆիզիկաաշխարհագրական պայմանների, առանձնահատկությունների, ռեժիմի, օգտագործման քանակական ու որակական բնութագրմամբ և այլն:

7. Q-ն ծախսն է, S-ը՝ կենդանի կտրվածքի մակերեսը (m^2), V-ն՝ արագությունը՝ ($m/վրկ$): Եթե գետի լայնակի կտրվածքը եռանկյան տեսք ունի, մակերեսը որոշում են եռանկյան մակերեսի բանաձևով՝ հիմքի և բարձրության արտադրյալի կեսով: Օրինակ՝ գետի լայնությունը 16 մ է, խորությունը՝ 80 սմ (0,8 մ), մակերեսը կլինի $16 \cdot 0,8 = 12,8 m^2$: Եթե արագությունը 60 սմ / վրկ է. (0,6մ/վրկ), ուրեմն $Q = S \cdot V = 12,8 m^2 \cdot 0,6 m / վրկ = 7,68 m^3 / վրկ$: Իսկ եթե վերցնում են միջինացված ցուցանիշներ՝ միջին լայնություն, միջին խորություն, ապա կիրառում են ուղղանկյան մակերեսի բանաձևը՝ հիմքի և բարձրության արտադրյալ:

Գետի ծախսը ժամանակի ընթացքում փոխվում է՝ ջրառատ ժամանակ մեծանում է, սակավաջուր ժամանակ՝ փոքրանում:

8. Հորդացումը ամեն տարի, նույն սեզոնում գետի ջրի մակարդակի սպասված բարձրացումն է: Երբ գետի ջրի մակարդակը հանկարծակի է բարձրանում՝ ձյան ուժգին հալոցք, անսպասելի առատ տեղումներ, ամբարտակի պատռվածք կամ փլուզում և այլն, գետը **վարարում է**: Սա պատահական երևույթ է և ամեն տարի չի կրկնվում: Վարարումների տարատեսակ է **սելա-վը**, որն ունի նույն պատճառները:

Սելավը առաջանում է չորային երկրներում, ցամաքային կլիմայական պայմաններում, ոչ մեծ ջրահավաք ավազան ունեցող գետերում: Սելավն ունի կոշտ նյութերի մեծ պարունակություն (200 – 320կգ. / m^3) Սելավը ջրի, ավազի, տիղմի, քարաբեկորների, գլաքարերի, ցեխի խառնուրդ է, որը կարող է մեծ ավերածություններ առաջացնել: Սելավները բնորոշ են նաև ՀՀ – ին 1946 թ. Երևան քաղաքով հոսող Գետառի սելավը ավերածությունների և զոհերի պատճառ դարձավ:

Սակավաջրություն (մեծեն) գետի ջրի մակարդակի իջնելն է: Այս դեպքում սնումը թուլանում է, ջուրը պակասում է և գետերը ծանծաղում են:

Հորդացումն ու սակավաջրությունը պայմանավորված են գետի ջրահավաք ավազանի կլիմայի առանձնահատկություններով: Հայկական լեռնաշխարհի գետերը հորդանում են գարնանը, սակավաջուր են ամռանը, իսկ

աշնանն ունեն հորդացումների թույլ արտահայտված ռեժիմ: Մուստոնային կլիմա ունեցող երկրներում գետերը հորդանում են ամռանը (ինչո՞ւ), միջերկրածովային կլիմա ունեցող երկրներում՝ ձմռանը (ինչո՞ւ), մերձհասարակածային գոտում՝ ամռանը (ինչո՞ւ), բարեխառն գոտում՝ գարնանը (ինչո՞ւ):